ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ—«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ԵՐԵՎԱՆ № 9 1969

ԱՐՏԱՇԵՍ ՄԱՔԵՎՈՍՅԱՆ

Ե՞ՐԲ ԵՎ ՈՐՏԵ՞Ղ Է ԳՐՎԵԼ ՄՇՈ ՏՕՆԱԿԱՆ-ՃԱՌԸՆՏԻՐԸ

Մաշտոցյան Մատենադարանի № 7729 մատյանը մեզ հասած հայերեն ամենամեծ ձեռագիրն է, որն հայտնի է «Մշո Ճառընտիր» անունով։ Այդպես է կոչվում, որովհետև ձեռագիրն այդտեղ է պահվել դարեր շարունակ և այդտեղից էլ հայտնի է դարձել բանասիրությանը։ Շատ է գրվել նրա մասին, առավել շատ է խոսվել, և նրա համբավը, ավելի քան որևէ հայերեն ձեռագրի, տարածված է աշխարհում։ Սակայն ձեռագրի գրչության հանգամանքները, տեղը, ժամանակը, ծաղկողը և այլն, դեռևս լրիվ պարզված չեն և դրանց վերաբերյալ տարբեր կարծիքներ կան բանասիրության մեջ։ Ձեռագրի, հիշատակարանի և հիշատակագրությունների քննությունը հնարավորություն է ընձեռում որոշակիություն մտցնել այդ թեական հարցերում։

Ձեռագիրը Մշո Առաքելոց վանք է բերվել 1205 թվականին։ Վանքի միաբանության և շրջակայքի բնակչության հանգանակությամբ, որ կազմում էր չորս հազար դրամ, գերությունից այն փրկագնվել էր Խլաթում ապաստանած այլազգի մի աստիճանավորից։ Ձեռագիրը գրելուց և ծաղկելուց հետո չէին հասցրել Հիշատակարանը գրել և կազմել։

Կազմելուց առաջ, Առաքելոց վանքում գրվեց ձեռագրի հափշտակման և վերագնման պատմությունը, որը և դարձավ ձեռագրի Հիշատակարանը, իսկ ձեռագիրը դարձավ «Մշո Տօնական» կամ «Մշո Ճառընտիր»։ Ձեռագրի կազմողն ու Հիշատակարանի գրիչը, որ միևնույն անձնավորությունն է, չի հիշատակում իր անունը։ Նա անհայտ է թողնում նաև ձեռագրի գրչության վայրն ու ժամանակը[1]*, որ անհայտ էլ մնաց մինչև այսօր։ Այնուհետև Տօնականը դարձավ Առաքելոց վանքի համար մի տեսակ Կոճղ, Մայր-Հուշամատյան. ուխտի միաբանները Տօնականի վերջում ավելացրին Գրիգոր Լուսավորչին վերագրվող «Կտակը» վանքի հիմնադրման ու սահմանների մասին, որը Տարոնի մեծ իշխան Զորտուանել Մամիկոնյանի՝ հիշյալ «Կտակ»-ին կից հիշատակարանի համաձայն, գրված էր «Հելլէն եւ յոյն գրով» և ինքը՝ իշխանը թարգմանել է «ի հայ գիրս» և հաստատել*[2]*։ Տօնականի մեջ արտագրված է նաև Մա-*

---

1 *Այսպես ենք կարծում, որովհետև նա, որ գիտեր Տօնականի գրչության հետ կապված որոշ մանրամասներ, նույնիսկ գրչի՝ Վարդանի կարնեցի լինելը, չէր կարող չիմանալ ձեռագրի գրչության վայրը։*

2 *Ղ. Ալիշանը այդ «Կտակի» մասին գրում է. «նման իմն է գրվածս հռչակավոր բայց անվավեր Դաշանց թղթոյն. ավելի ընդունելի է սա տեղագրական անվամբք և ծանոթագրությամբ, բավական հին թվի և վանուց առաջնորդն կամ միաբանն մի գրված, կես հին, կես նոր և ոսմիկ ոճով» (Հայապատում, Բ, էջ 98, ծնթ. 1)։ Հակառակ դրան Հ. Ոսկյանը հավաստում է, որ «ոճն ու բովանդակութիւնն դատելով, ետնադարյան է և անոր (Գր. Լուսավորչի—Ա. Մ.) անունովը կնքված՝ վանքին հողերը ապահովելու համար»։ Հեղինակը «Կտակը» անվանում է «Սահ-*